ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4068-Ա «06» հոկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝

1) սույն որոշման հավելվածի համաձայն՝ կազմակերպել և ապահովել Երևանի Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն վարչական շրջանների ենթակայությամբ գործող «Երևանի հ. 63 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.79 մսուր-մանկապարտեզ», «Երևանի 127 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.136 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.140 մսուր-մանկապարտեզ», Երևանի հ.146 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.159 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 3 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 8 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.9 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.11 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.13 մսուր-մանկապարտեզ» և «Երևանի հ.20 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենների (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոններն զբաղեցնելու մրցույթների (այսուհետ՝ Մրցույթ) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման իրականացումը.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օժանդակությամբ ապահովել սույն որոշման հավելվածին համապատասխան, հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ (www.yerevan.am).

3) ապահովել մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

2. Ընդունել ի գիտություն, որ մրցույթն անցկացվելու է Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման N 1 դահլիճում:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
2025թ. հոկտեմբերի 6 -ի
հ. 4068-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց
ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ

Հ/Հ	Թափուր պաշտոնի անվանումը	Մրցույթ անցկացնելու վայրը, օրը և ժամը	Հայտարարության հրապարակման օրը
1.	«Երևանի հ. 63 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.
2.	«Երևանի հ. 79 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.
3.	«Երևանի հ. 127 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.
4.	«Երևանի հ. 136 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.
5.	«Երևանի հ.140 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.
6.	«Երևանի հ. 146 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.
7.	«Երևանի հ. 159 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.11.2025թ. ժամը՝ 11:00	14.10.2025թ.

8.	«Երևանի հ.3 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 19.11.2025թ. ժամը՝ 11:00	17.10.2025թ.
9.	«Երևանի հ. 8 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 19.11.2025թ. ժամը՝ 11:00	17.10.2025թ.
10.	«Երևանի հ. 9 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 19.11.2025թ. ժամը՝ 11:00	17.10.2025թ.
11.	«Երևանի հ. 11 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 19.11.2025թ. ժամը՝ 11:00	17.10.2025թ.
12.	«Երևանի հ. 13 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 19.11.2025թ. ժամը՝ 11:00	17.10.2025թ.
13.	«Երևանի հ. 20 մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 19.11.2025թ. ժամը՝ 11:00	17.10.2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**